



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

U-27

1013

8105 MUI A S
6 NOV 2011

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ


891.99-3 //

Մ-278 427

պ.

Է Մ Ք Ի Ձ Ն Ե Ր

1001
2494



Բ Ա Գ Ո Ւ
Տ պ ա ռ ա ն „Ա Ր Օ Բ“
1903

24 JUN 2013

42005

Дозволено Цензурою г. Тифлисы. 27 Августа, 1903 г.

ԵՐԵՔ ԿՈՊԷԿ

Մի մութ, նեղ գետնայարկ սենեակ էր-
խոնաւութիւնից բորբոսնած պատերից գերեզ-
մանային սառնութիւն էր փչում. ճակատի կող-
մում հողէ յատակի վրայ փուլած էր մի հնա-
մաշ, ցեխոտ խտիր, վրան մի քանի պատառոտած
հագուստներ և համարեա ուրիշ սշինչ:

Խորի վրայ պառկած էր մօտ 13 տարեկան
մի տղայ՝ փաթաթուած ծվին-ծվին եղած վերար-
կւի մէջ: Նրա ոտները մօտ՝ ձեռները ծընկ-
ներին յենած, գլուխը կախ՝ նստած էր մի
ուրիշը:

Սենեակի զանազան անկիւններում երբեմն
երևում էին փոքրիկ շարածճի աչքերով մկներ,
որոնք արագ գուրս էին վազում բներից և նոյն
արագութեամբ ծածկւում, երբ մէկն ու մէկը
հառաչում կամ հագում էր:

— Զուր...մըմնջաց տղան:

Միւսը լուռ բարձրացաւ, աջ ոտի վրայ

կազարով մօտեցաւ, վերցրեց անկիւնում գրած կաւէ կուրան և տաւ տղային: Տղան նստեց ու սկսեց ազահուծեամբ խմել: Նա գունատ էր, նիհար, կոյր աչքերի սպիտակուցն այդ կիտախաւարի մէջ ճնշող տղաւորութիւն էր գործում:

— Ներսո այրում է... ասաց տղան՝ յետ տալով կուրան և նորից բնկաւ չոր խորի վրայ: Միւսը նստեց իր տեղը՝ յառելով հայացքը տղայի վրայ:

Աննեակում դարձեալ տիրեց լուսթիւն: Երբեմն միայն լուում էր հիւանդի անքոյր:

Կարճահասակ, կլոր մի մարդ էր ապիրը. նրա փոքրիկ գլուխը չէր յարմարում բոլորովին մարմնին: Նա կարծես ուժով էր բաց պահում ճպրտոտ, կարմրած աչքերը:

— Սէլրան, ախր էսօր ուտելու բան չունենք, լսուեց նրա փոքրիկ, համարեա կանաչի ձայնը: Տղան մնաց անշարժ:

— Վեր կաց, բալաս, գնորս գանք, Աստուած սպորմած է, կարելի է մի բանի կոպէկ հաւարենք, հօ քաղցած մեռնելու չենք: Վեր կաց, բալաս, վեր կաց, էս քանդաժում որ մարդ մեռնի էլ, տէրութիւն անող չի լինիլ:

Վերջին խօսքերի վրայ տղան դանդաղ բարձրացաւ և նստեց:

— Ախր չեմ կարող, ապեր:

Հինգ օրուայ հիւանդութիւնը նրան բոլորովին ուժասպառ էր արել:

— Մի քիչ գոշաղ կաց, գուրս գանք, սիրտդ կը բացի, էս անտէր մնացած սենեակի օդը կանես հոտած լինի. մկների հոտն էլ հօ խեղդում է, էտեղ սաղ մարդը կը հիւանդանայ, ուր մնաց հիւանդը. պառկելուց աւելի վատ կը լինի. համ էլ հօ չի լինի քաղցած մնայ, կրմկրմալով աւելացրեց նա:

— Հն, լաւ ես տսում:

Տղան գոզգոզալով սկսեց հագնել տրեխները:

— Գնանք, ապեր, սաղը վերցրու:

Նա ոյժ գործ գնելով աշխատեց ոտքի կանգնել: Գլուխը պտտեց, նա բնկաւ, նորից բարձրացաւ:

Եւ Յիսուս-Քրիստոս, գնւ օգնիր, —

Ապիտակ, գուրս բնկած աչքերը գլպի ապաստանն ուզելով մրմնջաց նա:

— Փայտս անը:

Նա ապր փեշից բռնած՝ օրօրելով հետեւեց նրան: Մի բանի քայլ հագիւ էին արել, որ տղան կանգնեց:

— Հը, լինչ կայ:

— Մի քիչ կաց, գլուխս պտտում է, ասնեքս կանես իմը չեն, ծնկերս ծաւում են:

Մի խոր շունչ քաշելուց յետոյ նա

նորից բռնեց ապօր փեշից, և շարունակեցին
գնալ:

— Հիմա մի քիչ լաւ եմ:

— Ես չ'ստացի, որ գուրս դանք, լաւ կը

լինես:

— Մի քիչ կամայց գնա, ապեր:

Նրանք լուռ առաջ էին գնում:

— Կնչո՞ւ ոչ մի տեղ չես մտնում:

— Ասում եմ էնպէս տեղ գնանք, որ մի
բան տան: Այ, քիչ է մ'նում էն տունը, որ էն
օրը մի աբասի տւին, էնտեղ գնանք:

— Էն շները էլի վրայ են պրծնելու, դժգոհ-
ութեամբ ասաց տղան:

— Եները մեղ ինչ են անելու... մի վախենալ:

Նրանք ներս մտան բակը. մի քանի
շներ ահագին ալմուկով յարձակեցին նրանց վրայ
Նրանք ձեռքի փայտերով աշխատում էին պաշտ-
պանել, բայց այդ ինքնապաշտպանութիւնն
աւելի էր գրգռում շների բարկութիւնը: Երեւի
երկար կը տեւէր, եթէ երկրորդ յարկից սպասա-
ւորը չը նկատէր և օգնութեան չը գար, չը
հալածէր շներին, որոնք այնքան ատում են
պատառոտած շորեր հագնողներին:

Նրանք կանգնեցին բակի մէջտեղում:

Տղան վերցրեց սաղը, մի բանի անգամ

թող խփեց լարերին և կարծես մերենայաբար՝
սկսեց երգել:

Պատշգամբի վրայ երբեմն երևում էին
գլուխներ, որոնք խփոյն անհետանում էին:

Երգն անկանոն բարձրանում, ցածրանում
էր. չափազանց ոյժից կոկորդի երակներն
ուռել էին, այտերը շառագունել, աչքերը լայն,
անբնական կերպով չուել. երգը խեղդում էր
նրա կոկորդում: Մի փոքր շունչ առնելով՝ նա
աշխատում էր շարունակել, մատները թող
խփում էին լարերին, ձայներ հանում, որոնք
խառնելով նրա երգի հետ՝ լալիս էին թող,
հազիւ լսելի:

Երգն ընդհատեց, նա գունատեց, դողաց:

Սազն ընկաւ ձեռքիցը, լարերը ալմուկ
հանեցին, խլացնելով տղայի թող ճիչը:

Նա ուշաթափ ընկաւ գետին:

Վերնայարկի պատշգամբից մի ձեռք մի
բան բաց թողեց, որը օդի մէջ պտոյտներ գոր-
ծելով ընկաւ քարերի վրայ, տղայի մօտ:

Երեք կողեկանոց էր...



Խ Ր Տ Ի Ի Լ Ա Կ Ը

Նա փոքրիկ էր, կուրծքը նեղ, հիւանդոտ, մէջքը մի փոքր կռացած, արևակէզ դէմքը նիհար էր, երկայն քիթը ծուռած դէպի բերանը, կզակը դուրս ցցւած, շրթունքները բարակ, կապտած. աչքերն այնքան փոքր էին, որ քիչ հեռւից սև գծեր էին երևում. գլխին սև մորթէ գլխարկ, որը այդ ծամածուռած դէմքին բոլորովին չէր սաղում: Հագած էր պատառտած բաճկոն, ստներին լայն-լայն երկար ճոքերով կոշիկներ:

— Խրաւիլակ:

Հէնց առաջին օրանից այդ մականունը տւին նրան. նա ընդհանոր հետարբրութեան առարկայ դարձաւ:

— Ինչպէս է անունդ, որտեղից ես — հարցնում էին ամեն կողմից:

— Ասան. «Я чучело», — սովորեցնում էին շրջապատողները:

Նա ապուշ, բերանը կիսարաց, բոլորովին թութակի նման կրկնում էր. «Я-чучело».

Ոչ ծեծ, ոչ պատիժ նրան զինուոր չը դարձրին. բոլորը համոզւեցին, որ նա ոչինչ չի գառնալ. նրան նայելիս մարդ ահամայ ծիծաղում էր:

Նրա փոքրիկ աչքերում յաճախ արցունքներ էին երևում, որոնք ոչ պակաս ծիծաղ էին յարուցանում:

Ոչ որի հետ չէր խօսում. լաւ կտաարում էր՝ ինչ հրամայում էին: Համարեա ամեն օր աւլում էր գորանոցի սենեակները, օգնում խոճանոցում:

Որքան էր նա տանջւել ջրի ծանր գոյլի տակ:

Պարապմունքների ժամանակ աշխատում էր խոհանոցում, իսկ հանդստութեան ժամերին նա գլարծացնում էր ընկերներին: Եւ յանկարծ...

Նա չը կար:

Ամեն տեղ փնտրել էին, բայց ոչ մի տեղ նրան չէին գտել:

Բոլորը համոզւած էին, որ նա փախել է ժամը 9-ից անց էր, երբ մի զինուոր՝ նրա թիկից բռնած՝ ներս մտաւ գորանոցը:

— Առռան, ուռռան, չուչիօն, չուչիօն...
գոռալով բոլորը դուրս թափւեցին անկո-

զիններբոց նրան նայելու: Նա ամբողջ մարմնով
գողում էր:

— Որտե՞ղ էր, ի՞նչու է թրջւած — հարցնում
էին ամեն կողմից:

Քոլորն ուշադրութեամբ նայում էին նրան:

— Ի՞նչ էր կարծում, սրտեղ էր. — շնե-
րին փակում էի. տեսնում եմ շները գնում են և վա-
խեցած, մոմոպտով յետ-յետ գալիս: Չարմացայ,
ի՞նչ պէտք է լինի. ներս մտայ, լուցիկ վառեցի,
տեսնեմ մէկը փուռած է գետնին. մօտ գնացի—
չուչէլօն:

— Հն՛, հն՛, հն՛, հն՛:

— Հարցնում եմ. ինչո՞ւ ես այդտեղ պառ-
կել, ոչինչ չի պատասխանում:

— Այ սարսաղ, ինչո՞ւ էիր այն ցրտումը
պառկել:

— Հայրենիքի պաշտպան... հեղներով ա-
սաց մէկը:

— Երևի ուզում է հիւանդանալ, որ տուն
թողնեն. չէ, էստեղ էլ կը սատկես:

— Հանգիստ թողէ՛ք. դրան, թողէ՛ք՝
չորերը փոխի. տեսնում էք լաց է լինում, —
ասաց ենթասպան, մի գէր, կարմիր գէմքով
տղայ:

— Ի՞նչ լաց, ծիծաղում է. տեսէ՛ք՝ ինչպէս

կը հռհռայ, ասաց մէկը՝ մատով խփելով նրա
երկայն թթին:

— Պառկեցէ՛ք, հրամայեց ենթասպան, —
խոկ գն, Քարուստով, հայրենակցիդ շորերը փոխի՞ր:

Քոլորը պառկեցին, բայց ծիծաղը չը պա-
գարեց, մինչև ենթասպան չը կրկնեց հրամանը՝
լուկ:

Կամաց-կամաց ամեն ինչ հանդարտեց, —
քիչ յետոյ բոլորը քնած էին:

— Կարօ, Կարօ, քնած ես:

— Հը, ի՞նչ է, այ տղայ, ինչո՞ւ չես քնում,
քնաթաթախ մրմնջաց նրա կողքին պառկած
զինւորը, որ նրա համազուգացին էր:

— Քունս չի տանում, մայրս, կըբայրս,
բոյրերս աչքիս առաջին գալիս գնում են, տես-
նես հիմա ինչ են անում, կարաք մէկէլ կ'ար-
ժանանանք:

— Քնիր, քնիր, Աստուծով կը պրծնենք-
կերթանք, հօ չեն մորթելու. սիկդրն է, տխուր
է թուում, մի քիչ անցնի, կը ստիպենք, լեզու-
ները կը հասկանանք. քնիր, իմ բունս էլ տա-
նում է:

— Չէ, խեղքս բան չի կտրում. ախր ինչո՞ւ
են բերել մեզ այտակ: Մէկ — մէկ սիրտս ասում է,
վերցրու գանակը, խրիր ջիգեարդ և վերջ տուր,
բայց էլի մտածում եմ — Աստուած ողորմած է

բարբի մէկէլ տեսնեմ մեր գիւղը... Կարօ, էս գիշերն էլ որ չլինի, ինչ կաններ... Կարօ Կարօ... քնեցիր... օօօիւ:

Արգէն մի քանի օր էր, որ նա պառկած էր հիւանդանոցում, ժամը գիշերուայ երեքն էր, լամպարը ազոտ լուսաւորում էր, բոլորը քնած էին:

Մահճակալներից մէկի մօտ մի գինուր նստած ննջում էր:

Մահճակալի վրայ, չապիկով, կուրծքը բաց պառկած էր նա. աչքերը փակ էին, բայց նա քնած չէր:

— Մայրիկ... ջնւր... տաք է... մ'նա՛ր բարով... մի լար... կըզամ, հօ չէ՛ն մորթելու...

Կուրծքն արագ ցածրանում—բարձրանում էր. սառը քրտինքը ծածկել էր ճակատը:

— Տէ՛ր շորերս... գնում եմ:

Նա նստեց մահճակալի վրայ, սկսեց հագալ, հագը շարունակեց մի քանի վայրկեան, նա թուրացած յետ ընկաւ խոտէ չոր բարձի վրայ:

Ինչո՞ւ չէ գալիս... ո՞ր է, բժիշկն ասաց տուն ես գնալու... Կարօ, գրիբ... մայրիկ... գրիբ... ես... լա...

— Նա լսեց: Երբեմն կցկաուր խօսքեր գուրս էին թռչում նրա բերանից:

— Գուռը բաց, տա՛ր է... մայրիկ... շննչս .. օհ... օ... ես էլ չեմ տեսնելու. վերջացաւ...:

Նա սկսեց հեկեկալ. գէմքը չբխտեց, ոչ մի կաթիլ արցունք գուրս չ'եկաւ նրա փորբիկ աչքերից:

— Հա՛ հա՛, հա՛ հա... յանկարծ ջրածգօրէ՛ն հահապ նա... Я чучело, чучело... մայրիկ... մայր... իկ...:

— Մի քանի ցնցումներ, և նա մ'նաց անշարժ...:

Բոլորը քնած էին, ոչ որ չըտեսաւ նրա մահը:



Գ Ա Ր Ե Զ Ր Ա Տ Ա Ն Ը

Պարնանային մի երեկոյ էր, զով, յտակ մի երեկոյ: Նրանք դուրս եկան անից: Փոքրիկ սենեակը լիքն էր ծխով. այնքան վիճել, հայհոյել էին միմիանց, որ երկուսն էլ զգում էին թարմանալու կարիք: Նրանք լուռ գնում էին առանց իմանալու թէ ուր: Պարեզին Սլիւնին, որ տարիքով աւելի մեծ էր երևում, միջահասակ, նիհար, նհարդային մի տղայ էր. երկար մազերը, որոնք աւելի շատ զգրգւած էին, քան գանգուր, իջնում էին մինչև ուսերը: Մլանն աւելի երիտասարդ էր, շարժուն, մի փոքր խորն ընկած աչքերում երևում էր եռանդ: Նա գեռ նոր էր վերկացել զպրօցական նստարանի վրայից:

— Մտնենք գարեջրատուն:

— Մտնենք, պատասխանեց միւսը և լռեց:

Նրանք ներս մտան առաջին հանդիպած գարեջրատունը: Պա սովորական գարեջրատուն

ներից էր, որոնք համարեա ամեն մի բայափոխում սլատահում են Թիֆլիզի փողոցներում:

Նրանք նստեցին մի բաւականի անմարուր սեղանի առաջ:

— Ե՛ր, մեզ երկու շիշ գարեջուր:

— Իսկոյն, — լռեց միւս կողմից:

Նորա լուռ, անհամբեր սպասում էին գարեջրին:

Սյգ լուռթիւնը ընդհատեց, երբ գարեջուր բերին:

— Վերցրո՛ւ:

Նորա լուռ վերցրին բաժակները և մի շնչով դատարկեցին. երկրորդն էլ նոյնպէս:

— Ես նախանձում եմ քեզ, Արամ — բաժակը սեղանին խփելով բացականչեց նա, — բայց ցնորքներ, ցնորքներ:

— Ո՛չ, իզուր ես քո արշինով չափում բոլորին: Նա, ով հաւատում է իւր իզէպլին, ձգտում է հասնել նրան և առանց վհատելու առաջ կերթայ...:

— Կեանքի վրայ մատների արանքով ես նայում. դու կարծում ես, որ այն, ինչ դպրոցական նստարանների վրայ երեւակայում էիր, կեանքումն էլ նոյնն է:

— Մենք միմիանց չենք հասկանում, աւելի

լաւ է թողնենք. եթէ ընդունելու լինենք քո տեսակէտը, այն ժամանակ պէտք է ծախենք ձեռներս և սպասենք, թէ երբ ստատանան մեզ կը տանի... կամ ինքնասպանութիւն... Իսկ իմ կարծիքովս, այդպէս վարուելու ընդունակ են միմիայն թուրքները:

— Այն, զու ճիշտ ատացիր, մենք միմիանց չենք հասկանում: Ե՛ր, գարձեալ երկու շէջ:

Նոցանից փոքր հեռու պատի մօտ մի սեղանի առաջ նստած էին մի աղջիկ և մի տղայ, տղան հազիւ տասն երեք տարեկան կը լինէր, նա ննջում էր:

Աղջիկը 18—19 տարեկան, գունատ, աչքերի տակը մի փոքր ուռած, ձեռներով լենուկ էր սեղանին և աննպատակ նայում էր մի կէտի: Նա տխուր էր... նրա մօտ դրւած էր տալիքը, սեղանի վրա ընկած էր մի հնամաշ փոքրիկ ջուլժակ:

— Նայիր դրանց, գոքա հացի խնդրի գոհեր են: Գիտե՞ս ինչ է դրանց արհեստը. նազեկ, երզեկ—ս՛չ՝ այս խայտառակ կեանքում դրանց ձայները կորցրել են իրանց քնքշութիւնն ու գրաւչութիւնը. հազիւ թէ ամենաանպէտք լսողութեան համար անդամ ախորժեկի լինին, բայց... գեղեցիկ է այդ աղջիկը:

Նա տխուր էր: Այստեղ ամեն բան լիտի,

վատ էր, թէ պատից կախւած նկարները, թէ ինքը գարեջուր ծախող կինը. այդ բոլորի մէջ այդ աղջիկը մի հակապատկեր էր:

Ի՞նչ ունի այդ աղջիկը, ի՞նչու է այդպէս տխուր—անցնում էր Ս. րամի մտքով,—գուցէ նա կորցրել է նշանածը, որը խարել, փախել է նրանից, կամ գուցէ սիրելիներից մէկին:

— Վալէնտին, Վալէնտին, լուեց նրա մի փոքր խղւած ձայնը. զու քնած ես: Տգան բարձրացրեց գլուխը և գժգոճ նայեց քրօջը:

— Ոչ որ չեկաւ, գնանք:

— Մի փոքր էլ սպասիր, դուցէ գան:

Նա գարձեալ գլուխը դրեց սեղանի վրայ և քնեց: Աղջիկը մնաց գարձեալ նայն գրութեան մէջ:

— Ու՞մ են սպասում դրանք:

— Քէֆ անուցները:

— Հարբածները:

— Կ'ուզես կանչեմ, հինգ կողմէկ, և նա մեզ համար կ'երգէ:

Նա առանց սպասելու համաձայնութեան մօտ կանչեց աղջկանը:

Նա ուզեց զարթեցնել եղբօրը:

— Ո՛չ, հարկաւոր չէ:

Նա հանդարտ քայլերով մօտեցաւ նրանց, գլխի թեթիկ շարժումով բարևեց և լուռ սպասում էր:

1001
1016



— Նւագիր մեզ համար:

— Ի՞նչ:

— Ի՞նչ կ'ուզէք:

Աղջիկը մի փոքր մտածելուց յետոյ կտոր-տուած ռուսերէնով սկսեց լուսառտ, յոգնած ձայնով՝

— Мой костеръ...

Мы простимся на мосту...

Նա վերցրեց փողը և լուռ սպասում էր:

— Ի՞նչ ազգից էք:

— Իտալացի:

— Վազմեց է՝ ինչ կովկասումն էք:

— Վազուց:

— Տղան ձեր եղբայրն է:

— Այո:

— Յաճախ էր լինում այստեղ:

— Ամեն օր:

— Շատ մարդիկ են գալիս:

— Նայած օրւան, կիրակի, տօն օրերը շատ են լինում:

— Դուք բոլորի համար էլ նւագում էք, — մէջ մտաւ Արամը, որը լուռ նայում էր նրան:

— Այո, բոլորի:

— Բայց ի՞նչպէս էք մնում, այստեղ՝ ի հարկ է՝ խմում, հարբում են:

— Սովորել ենք: Բայց չէ՞ որ մի բանով

պէտք է սպրեյ: մենք առաջ բակերումն էինք նւագում և կարողանում էինք մի կերպ տարել այն ժամանակ հայրըներս դեռ կենդանի էր:

Նրա դէմքը աւելի տխրեց:

— Մի տարի առաջ նա մեռաւ: Թաղելու համար պարտք վերցրինք. ուրեմն աւելի էր հարկաւոր աշխատել. բացի սպրեյուց պարտքի համար էլ այժմ ստիպւած ենք ամբողջ օրը փողոցներում թափառել, այս ու այն բակը մտնել: Նւագում ենք, երկար նւագում, մեզ ոչինչ չեն տալիս, ոչ ոք չի լսում մեզ. երևի կարծում են որ մենք զլւարճութեան համար ենք նւագում:

Երեկոններն ստիպւած ենք գալ այստեղ: Հայրս էլ էր նւագում. նա է մեզ սովորեցրել նւագել:

— Իսկ ձեզ դուք է գալիս այս կեանքը:

— Դուք է գալիս, ... կարծես զարմացած կրկնեց նա, — ի՞նչու պէտք է գուր գայ:

— Ուրեմն ինչո՞ւ էք մնում այստեղ:

— Մենք ուրիշ բան չգիտենք, մեր հայրն այս է թողել մեզ: Այստեղ լաւ է, միայն երբեմն թէֆ անողներ չեն լինում, և մենք ստիպւած ենք լինում անգործ նստել և առանց փողի տուն գառնալ: Մարդ տխրում է, սկսում է յիմար բաներ մտածել. տանտիկնոջ պէտք է վըճարել, կերակրել...

Այդ բողէին մի քանի կառքեր կանգնեցին դարեջրատան առաջ. քիչ յետայ ներս թափւեցին կանաք, կիսահարթած տղամարդիկ, ահազին ազմուկով եկան, մի քանի սեղան մեացրին և նստեցին:

Աղջիկը գլուխ տուեց և մտեցաւ եղբորը:

— Վալէնտին:

— Հր՛ւ...

— Վեր կաց:

Նա բարձրացրեց գլուխը և շուրջը նայեց:

— Եկան. ես չստացի, որ կը գան, — ասաց նա ուրախացած՝ որ խօսքը կատարուել է:

— Այն, — պատասխանեց քոյրը՝ նոյնպէս ուրախացած:

— Գնանք, բացականչեց Արամը:

— Սպասիր, նայիր:

— Զգուելի է:

— Ինչ յիմարն ես, նստիր, նստիր, մի շիշ էլ կը խմենք:

Մէկը մտեցաւ գարեջուր ծախող գէր կնոջը, համբուրեց նրա հետ, և քաշելով՝ տաբաւ խմրի մօտ:

Ազմուկը քանի գնում՝ սաստկանում էր: Մի քանիսը խուլոտ ձայնով երգում էին, ոմանք զոռգոռում, հայհոյում:

Տղան և աղջիկը կարծես նոցա ուշադրութիւնը գրաւելու համար սկսեցին լարել գործիքները:

— Օհօ, դուք էլ այստեղ էր, ասաց մէկը տեղից բարձրանալով և շտապ մտեցաւ նրանց՝ ու լիտի կերպով համբուրեց աղջկանը:

— Գնանք, գնանք:

Աղջիկը վերցրեց տաւիղը և տղայի հետ համարեա գրկւած անցան:

Վալէնտինը վերցրեց ջուժակը և հետեց քրոջը...

Նորա խմում էին և միմեանց գիրկն ընկնում: Աղջիկը և տղան նւագում էին: Համբոյրների թիւը քանի գնում շատանում էր. կանանց ճիշը, բաժակների գնոցը, ջուժակի և աղջկայ ձայնը խառնուել էին միմեանց, և այդ ընդհանուր աղմուկի միջից երբեմն լսում էր աղջկայ երգը.

„Мой костерь зимой не греть...“

— Անտանելի է. այդ աղջիկը սկզբում մի համեստի տպաւորութիւն թողեց, մի հակա-

պատկեր այս բոլորին, բայց նայիր նրան, համբուրում են նրան:

— Համբուրում են, որովհետև վճարում են, ամեն բան փողով է առնում:

Արդէն բոլորը հարբած էին: —

Զուժակը, տաւիլը մի կողմ էր ընկած: Համբոյնները ընդհանրացել էին. մինչև անգամ այն երեխային համբուրել էին տալիս կանանց, այն տղեկ, ներկած, լկտի կանանց. նա համբուրում էր, և ահագին ծիծաղ, համերական ըրրիջ էր բարձրանում:

— Վալէնտին, այս բաժակն էլ:

Նա դատարկում էր, և ամեն կողմից կեցցէներ, խրախուսանքներ էին լսում: Գինին, գարեջուրը շատ էր ազդել. հագիւ էին սոթի վրայ կանգնում:

Մէկը այս ու այն կողմն էր ընկնում, միւսը փսխում էր, մէկը երեսի վրայ փուած է գետնին, շորերովը քացով լսվում էր գեանին ընկածին:

— Ի՛նչ ես էշի նման մէջտեղը փուել, վեր կաց, շան որդի:

— Չեմ ուզում, չեմ ուզում... գոռում էր նա. երևի կարծում էր, թէ վինի են առաջարկում:

— Զօռ ու ցաւ ուզես...

Մէկը գրկել էր տաւաճարին, խօսում էր՝ համեմելով իւրարանչիւր խօսքը համբոյրներով. դա նոյն տղան էր, որը տարել էր նրան խմբի մօտ:

— Սյլ ես անտանելի է, -- վեր ցատկելով տեղիցը և համարեա գոռալով ասաց Ս. րամը. — գնանք:

— Նստիր, նստիր. սրանք կեանքի հարազատ զաւակներն են, զւարճանում են: Սա նման չէ՞ քո երևակայածին...

— Ես գնում եմ:

— Ելլիւզիան վախենում ես կորչի. նայիր, նայիր, տարան իդլալը:

Փորրիկ Վալէնտինն ընկած էր աթոռի վրայ զսնատ, մեռելի նման. նա ընած էր:

Աթոռները, մարդիկ, բոլորը խառնիխուռը թափթփուած էին:



ՍԵՒ ՔԱՂԱՔՈՒՄ

(Վիճակագրութեան օրերից):

Միմիանց նման ցած, խոնաւ, կեղտոտ և մութ սենեակների մի ամբողջ շարք էր:

Բակում թափթված էին խոզովակներ, մեծ կաթոսներ, որոնք երկար ժամանակ բացօդեայ մնալով ժանդոտել, անպէտքութեան էին հասել:

Կիսամերկ երեխաներ՝ թաթախած նաւթի մէջ, մրոտ, խազում էին ձիւթախառն ջրի հետ, որը լճացած էր բակի զանազան կողմերում:

Այստեղ ապրում էին երեք հարիւրից աւելի մարդիկ, մարդիկ, որոնք մոռացած ամեն բան, տենդային թափով շարձարւում, տանջւում էին, որ պահպանեն իրանց ողորմելի գոյութիւնը:

Բակում երբեմն երևում էին կանաչք մինչև սրունքները նաւթի մէջ, շորերը կեղտոտ գոյններն ուսներին շտապում էին դատարկել և նորից նոյն մեքենայական արագութեամբ

զիմում որսի, հաւաքելու այն փշրանքները, որ պատահամբ թափւել էին փողոցով անցկացրած խոզովակներից:

— Ուրբան էք կարողանում հաւաքել:
— Եթէ ամբողջ օրը աշխատել, կարելի է ութից մինչև տասը դոյլ, — պատասխանեց մի երիտասարդ կեն, որի դէմքի գեղեցիկ գծերը կեղտի տակ թաղցրել էին իրանց գրաւչութիւնը:

- Ծախնւմ էք:
- Այո՛:
- Քանիսով:
- Զոյգը վեց կողէի:
- Վեց կողէի:
- Այո, պատասխանեց նա և շարունակեց մըղել բրդի կտորի վրայ հաւաքւած նաւթը, որ անզգուշութեամբ թափել էր տակտոի մօտ:

Գունապանն ինձ պէտք է առաջնորդէր սենեակից սենեակ, որոնց մուտքը խափանուած էր միմիանցից տախտակի պատերով: Առաջին դուռը բացելուց՝ ապականւած օդի մի զարշելի հոսանք դուրս խուժեց սենեակից. մի վայրկեան տատանւեցի և ապա ներս մտայ:

Մէկը պառկած էր մի խարխուլ, մերկ տախ-

տակի վրայ, մօտ քառասուն և հինգ տարեկան, կարմիր գէմբով, ուռած շրթունքներով մի մարդ էր: Բերանը կիտարաց նա քնած էր:

Միւս անկիւնում մերկ յատակի վրայ պառկած էր մի կին, գլուխը սպիտակ, բայց կեղտոտ, սևացած թաշկինակով փաթաթւած, ուռած աչքերով, ձախ աչքի տակը կապտած:

Իմ մտներուց նա բարձրացրեց գլուխը, մի ինչ որ բան փնթփնթաց թթի տակ և նորից նայեց, փակեց աչքերը:

Պատառտած զգեստներ, ոսկորներ, կեղտոտ ամաններ, փայտէ գգալներ, — բոլորը խառնիխուռը թափթփթած էին:

Տախտի մօտ լճացած էր մի գարշելի հեղուկ, որին նայելիս մարդու ներսը տակն ու վրայ էր լինում, բերանը ջրակալում:

Ես աշխատում էի չը նայել:

Խեխտելու չափ ծանր էր օդը:

— Ի՞նչպէս է ձեր ազգանունը:

Ինձ ոչ որ չը պատասխանեց:

— Ավրբեր են սրանք, — հարցրի գոնապանից, որ լուռ կանգնած էր մօտս:

— Զ... ուլ:

— Քանի տղամարդ կայ:

— Մէկ մարդ է, մէկ կին:

Ես նշանակեցի և շտապեցի դուրս գալ:

— Լաւ սլէսար է, ամա ինչ անես որ խըմում է — մի օրումը մի շաբաթւայ աշխատածը փչացնում. էն էլ կինն է. նա էլ մարդուց պակաս չի խմում:

Բոլորն էլ միմիանց նման, ամեն տեղ նոյն կեղտոտութիւնը, նոյն խոնաւ, բորբոսնած պատերը:

44 ըզ սենեակը թիչ էր տարբերում միւսներից:

Պատի տակ, ցնցոտիների մէջ փաթաթւած պառկած էր մի ձերուհի, նիհար, քունքի ոսկորները դուրս ցցած: Կուրծքը անկանոն բարձր ու ցած էր անում, քրտինքը ծածկել էր նրա դալկացած գէմբը:

— Ձեր ազգանունը, — հարցրի մի երիտասարդ կնոջից, սրը թոյլել էր կերակուրը, փայտէ գգալը ձեռքին հարցական հայացք էր ձգել վրաս:

— Ձեր ազգանունը, — կրկնեցի ես:

— Ինչի՞ համար է:

Ես հանգստացրի:

— Կ... ուլ:

— Քանի տղամարդ:

— Երկու:

— Կին:

— Սէկ:

— Երեխայ՝
 — Չորս՝
 — Փնրք կնի՝
 — Այն՝
 — Ո՞վ է այն ծերունին՝
 — Ամուսնուս հայրը՝
 — Վազունց է հիւսնոց՝
 — Վաղունց՝
 — Բժիշկ գալիս է՝
 — Բժշկի կարիք չը կայ... նա կը մեռնի...
 — Կամաց — զգուշացրի ես՝
 — Նա չի լուսմ՝
 Ես շարունակում էի մի սենեակից միւսը մտնել. ամեն տեղ նոյն ազակահաւած օդը, մարդիկ թափթփաւած միմիանց վրայ։
 Գռնապանը չէր մոռանում ամենքին էլ ասել, որ վաղը վարձրի օրն է, թող պատրաստեն։
 — Որքան են վճարում ամսական։
 — Էնպէսը կայ հինգ, մի քանիսը վեց մանէթ. ինչ գօռով, ի՞նչ շարձարանքով ենք փող առնում. ալքատ մարդիկ են, սաղ օրը շարձարում են ու էլի էն են ու էլի էն։
 Ես կանգ առայ մի փակ դրան մօտ։
 — Ով է ապրում այստեղ։
 — Տաս — տասներկու հոյի։
 Նայեցի պատուհանից, մի փոքրիկ սենեակ

էր, յատակի վրայ թափթփաւած կեկոտտ անկոզիներ։
 — Տասներկու մարդ է ապրում այստեղ։
 — Տասնհինգ էին, կրեքը հայրենիք են գնացել։
 — Ոչ մէկի ազգը չը գիտեմ։
 — Կարապետով — երկար մտածելուց յետոյ առայ դռնապանը։
 Անցանք։
 — Զեր ազգանունը — հարցրի սենեակի դրանը նստած մօտ քսանուկեց տարեկան տըգամարդուց։
 Ցանցառ դեզնագոյն միրուքը խառնելով կեղտի մրի, հետ, մի անտրոշ գոյն էր ստացել։ Աչքերում ինչ որ մի թախիժ կար, որ դժւար էր յոզնւծու թեան թէ վշտի վելազրել։
 Ծորերը կեղտից փայլում էին։
 Նա մի բան էր շինում։
 — Զեր ազգանունը — կրկնեցի ես։
 — Զ... էվ — պատասխանեց նա առանց նայելու ինձ։
 — Քանի՞ տղամարդ կայ։
 — Մէկ։
 — Կին։
 — Մէկ։
 — Երեխայ։

Նա բարձրացրեց գլուխը, նայեց ինձ. մի
կաթիլ արցունք գոգալով գլուխեց նրա յոզնած
աչքերից:

— Մէկը կայ... բայց այսօր էլ չի վիճիլ...

— Ի՞նչպէս:

— Տեսնում էք... յաւիտենական բնակարան
եմ պատրաստում նրա համար. նա ցոյց տուեց մի
փոքրիկ, դեռ չը վերջացրած դաղաղ:

— Գազնոյ էք չիտում:

— Որդուս համար է:

Նա լուռ շարունակեց մեխել վարդագոյն
կտորը դաղաղի վրայ:

Ես շտապեցի հեռանալ:



[Faint, mirrored text from the reverse side of the page, likely bleed-through from the other side of the leaf. The text is illegible due to fading and mirroring.]

« Ազգային գրադարան



NL0352316

4119

4200